ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 18 >> 05 2012թ. N: 40 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՈՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 487 և 2005 թվականի թիվ 1384-Ն որոշումներով, հիմք ընդունելով <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետը և Նորիկ Գրիգորյանի 2012 թվականի մայիսի 17-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նորիկ Գրիգորյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն՝ 20 աշխատանքային օր, ամենամյա լրացուցիչ՝ 4 աշխատանքային օր արձակուրդները և մշտական հիմունքներով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու համար սահմանված 5 օր լրացուցիչ վճարովի արձակուրդը՝ 2012 թվականի հունիսի 4-ից:
2. Արձակուրդի տևողությունը՝ 2012 թվականի հունիսի 4-ից մինչև հուլիսի 13-ը ներառյալ:
3. Արձակուրդի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի ղեկավար Խաչատուր Պողոսյանին:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է